

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Յասմիկ Աբրահամյան

hasmikabrahamyanihasc@gmail.com

Ծնած է 1982ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուական՝ «Վարդավառը հայոց մէջ (պատմաազգագրական ուսումնասիրություն)» նիւթով: Ներկայիս կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ ՀԱԱԻ Սոցիալական գործընթացների եւ ինստիտուտների մարդաբանութեան բաժինը: Հեղինակ է շարք մը յօդուածներու, նուիրում հայ ժողովրդական եւ ազգագրական տոներու: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն հայոց տոնածիսական մշակոյթը, պահքի մշակոյթը: 2023էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Սուսաննա Ադամյան

suusannaiae@mail.r

Ծնած է Երեւան, 1978ին: 2017ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտին մէջ, նիւթ ունենալով Մետրոպոլ արք. Սմբատեանցի վիմագրագիտական գործունէութիւնը: 2006էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻ վիմագրութեան բաժնին մէջ: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն հայ վիմագրութիւնը, հնգիտութիւնը, յուշարձանագիտութիւնը:

Արտակ Ասատրեան

sardarapatasatryan@gmail.com

Ծնած է 1978ին, Արմաւիրի մարզի Արաքս գիւղը: 2006ին աւարտած է Խաչատուր Աբովեանի անուան Հայաստանի Պետական մանկավարժական համալսարանը (ՀՊԱՀ): 2006-16՝ Սարդարապատի հայոց ազգագրութեան թանգարանի ազգագրութեան բաժնի գիտաշխատող, 2020-21՝ Զուարթնոց պատմամշակութային թանգարանի գիտաշխատող: 2021էն՝ վարիչն է Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան բաժնին: Հրատարակած վերջին յօդուածն է՝ «Կարինում 1785 թուականին պատրաստուած եւ Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող N 3579 Սինին»: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբի պղնձագործութիւնը (պղնձագործական արհեստ եւ արտադրանք) եւ արծաթագործութիւնը (արծաթագործական արհեստ եւ արտադրանք): 2016էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Եւրի Աւետիսեան

yuriavetisyan@ysu.am

Ծնած է 1961ին, Արտաշատ: 2002ին պաշտպանած է դոկտորականը՝ «Արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն» նիւթով: 1988-2002՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի դասախօս, 2008էն՝ նոյն ամբիոնի փրոֆեսոր, 2015-9՝ ԵՊՀ սփիւռքագիտութեան ամբիոնի հիմնադիր-վարիչ, 2013էն՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի վարիչ: 2011էն անդամ է *Բանբեր Երեւանի համալսարանի*, իսկ 2013էն՝ *Հայագիտութեան հարցեր* պարբերականներու խմբագրական

խորհուրդներուն: 2009–14՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան ատեանի անդամ: Պարգևատրուած է ԹՄՄ «Հայկաշէն Ուզունեան» մրցանակ-պատուոգիրով (2003), ԵՊՀ ոսկեայ մետալով (2015) եւն.: Համահեղինակ է գիրքերու, հեղինակ՝ դասագիրքերու, մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայագիտութեան զուգահեռականներում* (2021):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն լեզուի կանոնակարգման հարցերը, հայոց լեզուն եւ խօսքի մշակոյթը, արեւմտահայերէնը, ծեաբանութիւնը, արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն, արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի զուգադրական քերականութիւնը, լեզուի զարգացումը, պաշտօնական լեզուն եւն.: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Տաթև Պատալյան

btatev5@gmail.com

Ծնած է 2000ին, Էջմիածին: Երաժշտագէտի վկայականով ասարտելէ ետք Ռոմանոս Մելիքանի անուան պետական երաժշտանոցը, 2020ին, ասարտած է Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը՝ երաժշտագէտի մասնագիտութեամբ, 2024ին, ասարտաճառ ունենալով «Հայկական թեմատիկան Ստեփան Էլմասի արուեստում» նիւթը: 2026ին պաշտպանած է մագիստրական՝ նոյն հաստատութեան մէջ: 2024էն իբրեւ մանկավարժ կը դասաւանդէ Մակար Եկմալեանի անուան երաժշտական դպրոցին մէջ, միաժամանակ տնօրէնի օգնական է Կոմիտասի թանգարան-ինստիտուտին: Հեղինակ է շարք ուսումնասիրական եւ երաժշտագիտական յօդուածներու եւ երաժշտական վերլուծութիւններու: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ եւ համաշխարհային երաժշտութեան պատմական եւ տեսական ոլորտները, Ստեփան Էլմասի ստեղծագործական ժառանգութիւնը:

Արծուի Բախչինեան

artsvi@yahoo.com

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին պաշտպանած է թեկնածուական՝ «Վահան Տէրեանի ստեղծագործական աշխատանոցը» նիւթով: 2009էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հայ գաղթավայրերի եւ Սփիւռքի բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *Հայերն Աֆրիկայում (պարմաբանասիրական ուսմանսիրութիւն)* (2024): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակութային առնչութիւնները, հայ շարժանկարի, պարարուեստի պատմութիւնը, նոր շրջանի պատմաբանասիրական նիւթերը, երեւելի հայագիներ...: 1998էն կ'աշխատակցի ՀՀՀին: 2001-21՝ ՀՀՀ ներկայացուցիչն էր Երեւանի մէջ:

Միհրան Գալստեան**galstyanmihraniae@gmail.com**

Ծնած է 1958ին, Գեղարքունիքի մարզի Գաւառ գաղաքը: 2016ին պաշտպանած է դոկտորականը՝ «Աշխատանքային միգրացիայի սոցիալ-մշակութային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում» նիւթով: 1989էն կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկին մէջ, ուր վարիչն է Սոցիալական գործընթացների եւ ինստիտուտների մարդաբանութեան բաժնին, անդամ է ՀԱԱԻԻ եւ Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրի գիտխորհուրդներուն, *Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի աշխատութիւններու* խմբագրակազմին, միաժամանակ 2007էն դասախօս է ԵՊՀ-ի մշակութաբանութեան ամբիոնին: Համահեղինակ է *Պատերազմ եւ յիշողութիւն. դարաբաղեան երկրորդ պատերազմի յուշարձանացման խնդիրները* գիրքին (2025): Հեղինակած վերջին գիրքն է *Աշխատանքային միգրացիան եւ սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում* (2023): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն բնակչութեան գաղթերը, եւ մշակութային փոխակերպումները, գաղթը եւ ընտանիքը, գաղթի նոր ձեւերը եւ անդրսահմանային կապերը: 2020էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Մանէ Խառատեան**art.phil.maneh@gmail.com**

Ծնած է 1985ին, Ալավերդի: Աւարտած է ԵՊՀ փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան ֆակուլտետի մագիստրականը՝ «Ժամանակակից արուեստը՝ որպէս տեխնածին քաղաքակրթութեան երեւոյթ» նիւթով: 2010-18՝ պաշտօնավարած է Կամերային երաժշտական թատրոնին մէջ, 2020-21՝ Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանին մէջ: Յունուար 2021էն Հայաստանի Պատմութեան թանգարանի տնօրէնի օգնական է:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն փիլիսոփայութիւնը, արուեստը, հոգեբանութիւնը, հոգեվերլուծութիւնը, բժշկագիտութիւնը, կենսաբանութիւնը, էթնոհոգեբանութիւնը: 2023էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Զաւէն Կնեազեան**zavenkniasian@yahoo.com.ar**

Ծնած է 1959ին, Պուենոս Այրէս: Հետեւած է Պուենոս Այրէսի Պետական համալսարանի ճարտարագիտութեան դասընթացներուն: 1992էն հայ մշակոյթ կը դասաւանդէ Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ կրթական հաստատութեան մէջ: Անդամ է Արժանթինի Երաժշտագիտութեան ընկերակցութեան: Հրատարակած է գիտական ու հանրամատչելի յօդուածներ հայերէն ու սպաներէն: Վերջին մենագրութիւնը՝ *La Historia Armenia a Través de un Traje*ն է (Հայոց պատմութիւնը տարագի մը ընդմէջէն, 2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական երաժշտական գործիքները, դրօշակներն ու զինանշանները, պարագիտութիւնն ու ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրները: 2018էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Գոռ Ղազարեան**ghazaryan3329@gmail.com**

Ծնած է 1998ին, Երեւան: 2023ին ասարտած է ԵՊՀ Պատմութեան ֆակուլտետը, մագիստրականի նիւթ ունենալով «Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհը (պատմաաշխարհագրական բնութագիր)»: 2025ին ասարտած է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Երկրաբանութեան ամբիոնի մագիստրականը՝ «Սեւանայ լճի մակարդակի տատանումները՝ ըստ երկրաբանական եւ պատմահնագիտական տուեալների» նիւթով: Հեղինակ է շարք մը գիտական յօդուածներու: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Գարեգին Նժդեհը, Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը, Հայկական Լեռնաշխարհի մարդ-բնութիւն փոխարարներութիւնները, երկրահնագիտութիւնը (Geoarchaeology), հնէաերկրաշարժագիտութիւնը:

Կարէն Ճալաթեան**kjallaty@uci.edu**

Ծնած է Գիւմրի, 1988ին: 2019ին պաշտպանած է դոկտորականը՝ բաղդատական գրականութեան մէջ, Քալիֆորնիոյ Ըրվայն համալսարանէն, նիւթ ունենալով «*Becoming Diaspora: Global Armenian Literature and Film After 1950*»: Դասաւանդած է Միչիկընի Էն Արպըր համալսարանի հայագիտական ամբիոնին, Լայփցիկի Լայպնից Հիմնարկին, Հունգարիոյ Փիթըր Փազմանի կաթոլիկ, Փարիզի Նանթեր համալսարանին մէջ: Ներկայիս որպէս հետազոտող կը պաշտօնավարէ Լայփցիկի Լայփնից Հիմնարկին մէջ, հետազոտելով Բագրատունեաց մայրաքաղաք Անին, միաժամանակ կը դասաւանդէ Փիթըր Փազմանի կաթոլիկ համալսարանին մէջ: Մասնակցած է հայագիտական գիտաժողովներու, հեղինակ է հայ լուսանկարչութեան, սփիւռքագիտութեան, սփիւռքահայ գրականութեան, լեհահայութեան, յետ-խորհրդային այլախոհութեան եւ այլ ժամանակակից թեմաներով գիտական յօդուածներու: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքը, Վահէ Օշականի գրականութիւնն ու միտքը, մայրաքաղաք Անին, եւ Թրանսիլվանիոյ հայագաղութը:

Վարդան Մատթէոսեան**varny1@yahoo.com**

Ծնած է 1964ին, Մոնթեվիտէ: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ սկիզբէն մինչեւ 1950» նիւթով, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ: 2019էն կը վարէ Նիւ Եորքի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ արեւելեան թեմի (կիլիկեան աթոռ) դիւանապետի պաշտօնը: Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն, որոնց վերջինն է *The Color of Choice: The Politics of Race in the United States and Germany (1890-1945)*, 2025ին: 2023ին արժանացաւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոս Արամ Ա. վեհափառի «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նո-

րագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Գագիկ Մարտոյեան

martoyangagik474@gmail.com

Ծնած է 1965ին, Երեւան: 1992ին ամարտած է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1992-94՝ պաշտօնավարած է ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մէջ, որպէս լրատուութեան եւ վերլուծութեան բաժնի պետ: 1994-2000՝ զբաղած է լրագրութեամբ, աշխատակցելով *Ազգ, Առաւօր, Հայաստանի Հանրապետութիւն* օրաթերթերուն: 2000-4՝ պաշտօնավարած է ՀՀ ՆԳՆ ներքին զօրքերուն մէջ, որպէս ակումբի պետ: Հեղինակ է շարք մը մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Ժողովրդական միհրապաշտութիւնը եւ զարնանային տարեմուտը* Սասնայ ծռեր *էպոսում* (2018): Ունի շարք մը յօդուածներ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ ազգագրութիւնը եւ աստղային առասպելաբանութիւնը: 2000էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Թեհմինէ Մարտոյեան

tehminemartoyan@gmail.com

Ծնած է Երեւան, 1977ին: 2007ին պաշտպանած է թեկնածուականը «Կարմէլեանների տարեգրութիւնը՝ որպէս Իրանի 17-18րդ դարերի պատմագիտական աղբիւր» նիւթով, զոր գիրք իբրեւ հրատարակած է 2011ին: 2020ին պաշտպանած է երկրորդ մագիստրականը՝ «Զմիւռնիայի հայերի եւ յոյների բնաջնջումն ու քաղաքի հրկիզումը՝ որպէս ցեղասպան քաղաքականութեան շարունակութիւն» նիւթով: 2012էն դասախօս է Աւետիք Մկրտչեանի անուան Տնտեսաիրաւագիտական համալսարանը: 2015 Յունուարէն նախագահին է Լազարեան Ինստիտուտ Գիտակրթական Հասարակական Կազմակերպութեան: 2019էն աւագ գիտաշխատող է Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի թանգարանային ցուցադրութիւններու կազմակերպման բաժնին մէջ: Ունի նաեւ թարգմանութիւններ: 2015էն կ'աշխատակցի *Հայկազեան Հայագիտական Հանդէսին*:

Միհրան Մինասեան

mihran.min@gmail.com

Ծնած է Հալէպ: Երկրորդական ուսումը ստացած է Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը: Համահեղինակութեամբ հրատարակած է *Հայկացիներու ապստամբութիւնը օսմանցի կուսակալ Խորշիկ Փաշայի դէմ (1819-1820) – Աբրահամ արք. Քիւրէլեանի օրագրութիւնը* արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի *Հասկ հայագիտական տարեգիրքին*, *Բագինին*, *Ցեղասպանագիտական հանդէսին*, *Բանբեր մարտնադարանին* եւ այլ հանդէսներու եւ յօդուածներու ժողովածու գիրքերու՝ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններով, նուիրուած հայ հնատիպ գիրքին, հայ պարբերական մամուլի մատենագիտութեան, հայերէն ձեռագիրներու, Հայոց Ցեղասպանութեան պատմութեան, հայ լուսանկարչութեան եւն.: Զբաղած է նաեւ

բանահաւաքութեամբ: Հայոց Յեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներէ գրի առած է վկայութիւններ եւ ազգագրական-բանահիւսական հսկայ նիւթ: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու ինստիտուտ-մատենադարանին եւ ՀՀ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտին մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անի Մխիթարեան

amkhitaryan89@gmail.com

Ծնած է 1989ին, Թալինի Աշնակ գիւղը: 2013ին պաշտպանած է մագիստրականը՝ «Հայկական տարագր գեղանկարիչների գործերում» նիւթով: Ներկայիս կը պատրաստէ իր թեկնածուականը: 2014-17՝ աշխատած է Սարդարապատի Ազգագրութեան թանգարանը, աշխատակցած է *Էջմիածին* ամսագիրին: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն միջնադարեան հայ արուեստը, հայկական ազգային տարագր, հայկական գորգագործութիւնը, հայկական զարդարուեստը, գործուածքը:

Կարէն Մկրտչեան

K86Mkrtchyan@gmail.com

Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայ-իրանական յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով: Ներկայիս ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի հայ գաղթօճախներու եւ Սփիւռքի պատմութեան գիտաշխատող է: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն համաշխարհային նոր համակարգը, ՀՀ-Իրան քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայօճախը, դարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Յեղասպանութեան հարցերը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Նարինէ Ս. Յակոբեան

hakobyannarine8@gmail.com

Ծնած է Ստեփանակերտ, 1990ին: 2013ին պաշտպանած է մագիստրականը՝ ԵՊՀ Միջազգային յարաբերութիւններու ֆակուլտետին մէջ, ներկայիս կ'աշխատի թեկնածուականին վրայ՝ «1894-1897 թթ. արեւմտահայերի կոտորածները Օսմանեան կայսրութիւնում» նիւթով, պաշտօնավարելով նաեւ Հայոց Յեղասպանութեան Ծիծեռնակաբերդի Թանգարան Ինստիտուտին աղբիւրագիտական բաժնին մէջ: Հեղինակ է տասնեակ մը գիտական յօդուածներու, հրատարակութեան պատրաստած է Լեւոն Աշպահեանի, *Իմ կեանքի մասին*, յուշագրութիւնը (2022): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն 1894-97ի արեւմտահայութեան կոտորածները:

Հայկ Նազարեան

nazaryan_h90.90@mail.ru

Ծնած է Երեւան, 1990ին: 2008-10՝ ծառայած է հայկական բանակին: 2018ին պաշտպանած է թեկնածուականը՝ ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտին մէջ, «Մեծն Բրիտանիայի աշխարհառաջնավարական շա-

հերը Հայաստանում եւ Այսրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918 թթ.)» նիւթով: 2015-21՝ աշխատած է Հայաստանի ազգային արխիւին մէջ: 2022էն աւագ գիտաշխատող է Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնին մէջ: 2022-23՝ պատասխանատու քարտուղար *Աշխարհութիւններ Հայաստանի պատմութեան թանգարանի* հանդէսի խմբագրական խորհուրդին, 2022էն ՀՀ ԳԱԱ փիլիսոփայութեան, սոցիոլոգիայի եւ իրաւունքի ինստիտուտի, քաղաքական հետազոտութիւններու բաժնի աւագ գիտաշխատող է, իսկ 2023էն իմերնոյն ինստիտուտի գիտական քարտուղարն է: Մասնակցած է շարք մը հանրապետական եւ միջազգային գիտաժողովներու: Հեղինակ է *Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում (1914-1920 թթ.)* (2020) հատորին եւ շարք մը գիտական յօդուածներու: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ռազմական պատմութիւնը, ռազմական արդիւնաբերութիւնը, աշխարհա-ռազմավարութիւնը (Geostategy): 2022էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արքմենիկ Նիկողոսեան

arqmenik@gmail.com

Ծնած է 1979ին, Գեղարքունիքի Ծովակ գիւղը: 2008ին պաշտպանած է թեկնածուական՝ «Առաքել Դաւիթեցու Պատմութիւնն իբրեւ գրական երկ» նիւթով: Ներկայիս իբրեւ աւագ գիտաշխատող կը պաշտօնավարէ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտին մէջ, միաժամանակ գլխավոր խմբագիրն է «Անտարէս» հրատարակչութեան: Հեղինակ է մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Չարենց. երեք ուսումնասիրութիւն* (2022): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ գրականութիւնը:

Վահրամ Շէմմասեան

vahram.shemmassian@csun.edu

Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” նիւթով: 2006էն տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Ունի բազմաթիւ յօդուածներ, Մուսա Լեռան բնակչութեան նուիրուած մենագրութիւններ, վերջինը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (2020): Պարգևատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ոփիլիըմ Սարոյեան շքանշանով (2010): Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի Ֆրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Ազնիւ Զիլինգարեան**chilingaryanazniv@gmail.com**

Ծնած է Երեւան, 1966ին: 1997ին պաշտպանած է թեկնածուական՝ «Մելքոն Կիրճեանի կեանքը եւ ստեղծագործութիւնը» նիւթով: 2009էն դոցեւստ է Ճարտարապետութեան եւ շինարարութեան Հայաստանի ազգային համալսարանի, լեզուներու ամբիոնին: Հեղինակ է գիտական եւ ուսումնամեթոդական յօդուածներու: Ունի հրատարակութիւններ, վերջինը՝ *Հայոց լեզու եւ խօսքի մշակոյթ, ուսումնական ձեռնարկ* (համահեղինակ՝ Ա.Ս. Խաչատրեան 2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն գրականագիտութիւնը, գրաքննադատութիւնը, մեթոդիկական եւ լեզուաբանութիւնը:

Անդրէյ Պասլարիու (Andrei Paslariu)**andrei_paslariu@yahoo.com**

Աւարտած է Պուքարեսթի համալսարանը՝ Universitatea Națională de Arhitectură și Urbanism „Ion Mincu”: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ճարտարապետութիւնը: Ներկայիս կ'ապրի Պուքարեսթ, Ռումանիա:

Յասմիկ Պարան**hasmig.baran@csun.edu**

Ծնած է Հալէպ: 2012ին պաշտպանած է դոկտորականը՝ «The Role of Ethnic Culture in Work-Family Balance Among Armenian Women in Leadership Positions in Higher Education» նիւթով: 2013էն հայագիտութեան դասախօս է California State University, Northridgeի մէջ: Անդամ է Հայկազեան Համալսարանի, Լոս Անճելըսի առաջնորդարանի հայկական դպրոցներու, Analysis Research and Planning for Armenia (ARPA)ի հոգաբարձութեանց, եւ ամետարանական ներկայացուցիչը՝ Լոս Անճելըսի Հայկական Միացեալ Խորհուրդին: Հրատարակած է “The Syrian Armenian Rural Community of Ayn-El-Arous” ուսումնասիրութիւնը՝ *Armenians of Syria: Proceedings of the Conference (24-27 May 2015)* հատորին մէջ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն կրթութիւն-դաստիարակութիւնը եւ կնոջական հարցերը:

Թամար Պոյաճեան**drtboyadjian@gmail.com**

Ծնած է Մ. Նահանգներ: 2010ին պաշտպանած է դոկտորականը UCLA՝ «Bridging ‘East’ and ‘West’: A Study of Jerusalem in the Literature and Chronicles of the Early Crusades» նիւթով: Ատենապետն է Քանադայի Հայոց Յեղասպանութեան թանգարանին: 2023էն դասախօս է Սթենֆորտ համալսարանի գրականութեանց, մշակոյթներու եւ լեզուներու ամբիոնին, միաժամանակ UC Berkleyի հայ գրականութեան այցելու դասախօս է, 2020-24՝ պատասխանատու խմբագիրը *Journal of the Society for Armenian Studies*ի: Արժանացած է բազում մրցանակներու, ինչպէս՝ 2019ի NAASRի Սօնա Ահարոնեան գիրքի մրցանակին իր *The City Lament: Jerusalem across the Medieval Mediterranean* (2018) գիրքին համար:

Պոյաճեան բեղուն գրիչ մըն է, միջնադարու գրականագէտ: Իր *Ինչ որ է ան է* գիրքը ԱՄՆ ծնած գրողի մը կողմէ հրատարակուած առաջին արեւմտահայերէն բանաստեղծութիւններու ժողովածուն է: Հեղինակ է նաեւ ուրիշ գեղարուեստական գիրքերու, որոնց վերջինը՝ *Մէփէն եւ Վիշապը՝ Վահագնի արարողութիւնը* (2025): Թարգմանած է Զապէլ Եսայեանի *Սպասման սրահին մէջը* (*In the Waiting Room*, 2026): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն արդի եւ միջնադարեան հայ գրականութիւնը, վտանգուած լեզուներ եւ թարգմանութեան հարցերը, հայկական ապագայապաշտութիւնն ու արեւմտահայերէնի տեղը անոր մէջ, հայ կնոջ դերն ու գործերը արեւմտահայ գրականութեան պատմութեան մէջ եւն.:

Վահէ Պօղոսեան

v.boghos@hotmail.co.uk

Ծնած է Լոնտոն, 1995: 2018ին աւարտած է University College of Londonի պատմութեան բաժանմունքը մագիստրական վկայականով: Տնօրէնն է Սուտանահայ. սուտանահայութեան ժառանգը նախագիծին: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն պատմութիւնը, հայոց/Ափիւքի/սուտանահայ պատմութիւնը, քաղաքականութիւնը, միջազգային ապահովութիւնը, աշխարհագրաքաղաքագիտութիւնը, Ռիսքի գործօնը եւ անոր վարումը:

Ֆաթիմա Սալահ

fatmhsalah82@gmail.com

Սուտանցի Ֆաթիմա ԱլԶահրա՝ Խալէտ Օմէրը ծնած է 2000ին, Ռիատ, Ս. Արաբիա: 2017ին աւարտած է Խարթումի համալսարանի ընկերաբանութեան եւ մարդագիտութեան բաժինը, նիւթ ունենալով «Սուտանցի գաղթականներու տան վերականգնումը Գահիրէի մէջ, 2023ի Սուտանի պատերազմին հետեւանքով անոնց առօրեայ կեանքի եւ կենցաղի փոփոխութեան լոյսին տակ»: Ներկայիս հետազօտող է Խարթումի համալսարանի մարդագիտութեան բաժնին մէջ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն գաղթն ու սփիւռքը, մշակութային ժառանգը, արխիւագիտութիւնը, ընկերային արխիւայնացումը, երաժշտութեան արխիւացումը, արուեստի պատմութիւնը:

Արմինէ Վահանեան

a.v.vahanyan@gmail.com

Ծնած է Երեւան, 1974ին: 1998ին աւարտած է ՀՊՄՀի թեկնածուականը՝ տարիքային եւ մանկավարժական հոգեբանութիւն մասնագիտութեամբ: 2024էն հոգեբանութեան ամբիոնի աւագ դասախօս է Հայ-Ռուսական համալսարանին մէջ: Հեղինակ է հոգեբանութեան վերաբերող գիտական յօդուածներու: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն էթնոհոգեբանութիւնը եւ ցեղասպանագիտութիւնը, քրիստոնէական հոգեբանութիւնը, կրթութեան հոգեբանական անվտանգութիւնը, բուհական հոգեբանութիւնը, ընկերային եւ ընտանեկան կեանքի հոգեբանութիւնը, զարգացման եւ անձի հոգեբանութիւնը, հոգեբանական խորհրդատուութիւնը:

Արփի Վարդումեան**avardumyan8@gmail.com**

Ծնած է 1948ին, Երեւան: 1972ին աւարտած է Կոմիտասի անուան Երեւանի պետական կոնսերվատորիայի երաժշտութեան պատմութեան եւ տեսութեան բաժինը: Այժմ գիտաշխատող է Մատենադարանի արուեստի պատմութեան եւ գրչութեան կեդրոններու ուսումնասիրութեան բաժինին մէջ: 1998էն անդամ է Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագէտների միութեան: Հրատարակութեան պատրաստած է հայր Ղեւոնդ Տայեանի բազմահատոր *Շարակնոցի*, Ա. հատորը, նաեւ՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի «Մատենան երաժշտականութեան» ծաւալուն ձեռագրի բնագիրը: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ միջնադարեան շարականները, Կոմիտաս վարդապետի երաժշտական գործունէութիւնը, Եղիա Տնտեսեանի երաժշտական բերքը: 2012էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*: